Արձանագրություն N 4
ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 փետրվարի 2019թ
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Ստեփանյան
Հանձնաժողովի անդամ՝ Աշոտ Քթոյան (գնահատող)
Էրիկ Համբարձումյան(գնահատող
Հանձնաժողովի քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

1. N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/3 գնման պայմանագրի շնորհումը մերժելու մասին
(Սարգիս Ստեփանյան)

1.1 **18.02.2019թ.**-ին **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ-ին** armeps.am համակարգով ներկայացվել է պայմանագրի շնորհում, նույն օրը **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ-ին** armeps.am համակարգով և **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ-ի** ներկայացրած հայտում նշված էլ. փոստի հասցեին ներկայացվել է **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/3** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքվող պայմանագրի նախագիծը: Սակայն, **18.02.2019թ.**-ին **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ-ն** armeps.am համակարգով մերժել է պայմանագրի շնորհումը, պատճառաբանելով թե՝ <***Քանի որ «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը գրված է մեկ այլ ընկերության կողմից, Ակթրեյդ Սոֆթ ՍՊԸ-ն չի կարող նոր ծրագիր վերամշակել, իսկ աշխատանքները պետք է սկսել 01.03.2019 :***> **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված պատճառաբանումը անհիմն է և **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ նա հրաժարվում է կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ **<Ակթրեյդ-Սոֆթ> ՍՊԸ**-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ/ մասով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնման գործընթացը շարունակելու մասին
(Սարգիս Ստեփանյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 49-րդ կետը՝ **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ> ՍՊԸ-ին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հրավերով սահմանված կարգով կատարել ՊԵԿ հարցում: Սույն արձանագրությունը ծանուցել բոլոր մասնակիցներին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:00-ին, ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8, 306 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս.Ստեփանյան

անդամներ՝ _____ Ա. Քթոյան

_____ Է. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Ս.Պետրոսյան